

ԱՐԺԱՆԹԻՆԱ ԵՒ ՊՐԱԳԻՄ՝ ՎԱՏ ԵՒ ԼԱՒ ԼՈՒՍԵՐ

Posted on November 28, 2009 by Keghart

Առազին անգամ

Առազին անգամը՝ չեմ յիշեր, թե երբ եւ ինչպէս թողնուած եմ
 'հայրիկ-մայրիկ' ը եւ թե հայրիկը առաջ ըսած եմ, թէ մայրիկը: Չէ,
 որքան ալ յիշողութիւնս սրեմ, չեմ յագողիր: Կը յիշեմ սակայն
 նեղացուցիչ այն հարցումը, ինքի ուղղուած ամբողջ մանկութեանս
 ջրգանին բարեկամ, հարապատ, ազգականներու կողմէ, իբրեւ թե
 չափելու խեղութեանս աստիճանը. հայրիկը աւելի կը սիրես, թէ
 մայրիկը որուն պատասխանս եղած է. հայրիկը եւ մայրիկը :
 Առազին անգամ սիրահարուիլս կը յիշեմ, մայրիկիս, որուն դէմքը,
 տեսքն իսկ կը յուզէր հոգիս եւ լալս կուգար: Գիշերները յնաբը
 ամուր բռնած արթուն կը պահէի պինք, մինչեւ անցնէի խոր քունի եւ
 թոյլ տայի որ ինքն ալ իր կարգին քնանար:
 Առազին անգամ կը յիշեմ, երբ հայրիկը շուկայ տարաւ պիս, եւ
 հարցուց, թե ինչ կ'ուզեմ եւ որովհետեւ մեծ էր ակնածանքս ու
 հիացումս իրեն հանդէպ, չկրցայ ըսել, թե ինչ կ'ուզեմ. քաջուցայ,
 ամչցայ, կարմրեցայ: Հայրիկը հերոսս էր իր տեսքով, մարմնով,
 խելքով: Կը նուագէր, կ'երգէր, կը գրէր, կը պատմէր եւ, ըլլալով
 ուսուցիչ, ստացած էր պարուն մակդիրը: Ամբողջ գերդաստանը իր
 մասին կը խօսէր որպէս 'պարունը': Հին սովորութեանց համաչայն՝
 մայրիկը չէր համարձակեր հայրիկին անունը տալ՝ Արմենակ ըսել:
 Մարդոց մէջ երրորդ դէմք գործածելով կ'ըսէր. Պարունը այ սպէս
 ըսաւ Պարուն ո՛ր է եւ այլն :
 Կ'արտասանէի Դերենիկը ծայրէ-ծայր, ր երը յ ընելով.
 Գ երն ալ դ եւ միշտ կը սկսէի այ սպէս. Դերենիկը, Դանիէլ
 Վարուժան, գրեց հայրիկս :
 Դուռը կը բացուի, Դերենիկն, ահով.

 Մօրը թեւերուն մէջ կ'իյնայ լալով.
 Ի՛նչ ունիս, տըղաս ... ըսէ շուտ, մի լար,
 Օ՛չը բեզ խածաւ, թէ՛ աքացեց չին:
 Գլուխս պատռեց դըրացի Ալին ...:

 ... եւ Մայրը կը գոռայ. Դուրս ... մինչեւ որ յաղթած
 Արիւններդ անոր արեամբ չըմաքրին
 ...

Category: [Opinions](#)





